

1860—1865



**Ա** ՀԱ ա'յսպիսեաց ոմանց էր՝ սր տուաւ նախ ազնուական դաս մը անգղիական Ֆրէյզըրներու տունը, որ խնամարար թեւարկեց Մարտիրոս Թօքատեանի անկազ նախաքայլերուն ի Մանչէսթըր՝ երբ այս վերջինը, Սկիւտարի ձեմարանին այն փիլիսոփայ մըջիւնը<sup>(1)</sup>, խնայազործած բաւական կոկիկ դրամագլուխ մը (2000 լիրայի չափ), իր Տեարց՝ Քաբամաճեանց՝ գործերուն մէջ, այս

(1) Մարտիրոս Թօքատեան՝ աշակերտած էր արժանարար Սկիւտարի մեծ ձեմարանին 1846ին՝ Յովհաննէս Տէրոյենցի(\*) բեղուն ուսումնապետութեան տան. և ա'յն ժամանակէն՝ իր չափազանց աշխատութեան համար՝ մըջիւն կը կոչուէր այդ մեծ դպրոցին մէջ: Սկիւտարի հին ձեմարանը տուած է նշանաւոր աշակերտներ՝ հանրութեան, բանասիրութեան, գիտութեան և վաճառականութեան այն հի'ն օրերուն, որ արդի օրերուն կարգ մը սիրուն վազազատ եւ ինքզինքնին միայն տեսնող և հոչակող անձերէն յեսաղիմական կը յորշորջուին: ձեմարանի աշակերտներ էին բանասէրներէն վարչազէտներէն ու գիտուններէն. Խ. Պ. Մխաբեան, Տ. Յովհ. Հիւնքեարպէյէնտեան, Կ. Ս. Իւթիւճեան, Տօքթ. Ստեփան փաշայ Արսլանեան, Տօքթ. Բարունակ պէյ Քրթիկեան, մասամբ Տօքթ. Խօրասանճեան, մամէմաթիկոս Սիմէոն Միքայէլեան, Յովհ. Նուրեան, վաճառականներէն՝ Մարտիրոս Թօքատեան, Մկրտիչ ՊէշիքՍալլեան, Պետրոս Ֆնտըզլեան և ուրիշ շատեր:

(\*) Տե՛ս Յովհ. Տէրոյենցի վարքը Տասնէւիցներորդ դար, տպագր. Կ. Պոլիս 1907: